ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 240 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի մարտի 31-ի «Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզադպրոցին մարզական գույքի տրամադրում» ծրագրի մասին» N 175-Ա որոշման հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում «բոնցքամարտի ռինգի ներմուծում՝ 4,500,000 դրամի չափով» բառերը փոխարինել «բոնցքամարտի ռինգի ձեռքբերում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերով:

2. Սահմանել, որ «Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 06960852) «Բեսթ Թրեյդինգ 20» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 08435286) 2026 թվականի ապրիլի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բոնցքամարտի ռինգի

ձեռքբերում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի մարտի 31-ի N 175-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ